ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 376
*ներթական համարը*

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի
*ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքը (Անտառուտ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ*
*(Աշտարակ համայնքի (Անտառուտ բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. *Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքը (Անտառուտ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արագածոտն-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

| ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի (Անտառուտ բնակավայրը)<br>Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| 02-010-0110-0233 կադաստրային ծածկագրով 1.45168 հա մակերեսով (որից՝ 1.43215 հա արոտավայր, 0.01953 հա խոտհարք), 02-010-0110-0230 կադաստրային ծածկագրով 0.10303 հա մակերեսով (որից՝ 0.00162 հա արոտավայր, 0.10141 հա խոտհարք) և 02-010-0110-0231 կադաստրային ծածկագրով 0.05685 հա մակերեսով (որից՝ 0.0217 հա արոտավայր, 0.03515 հա խոտհարք) գյուղատնտեսական նպատակային նշանակության (ընդամենը՝ 1.45547 հա արոտավայր և 0.15609 հա խոտհարք) հողեր | 02-010-0110-0233 կադաստրային ծածկագրով 1.45168 հա մակերեսով, 02-010-0110-0230 կադաստրային ծածկագրով 0.10303 հա մակերեսով և 02-010-0110-0231 կադաստրային ծածկագրով 0.05685 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողեր |

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:
3. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Անտառուտ բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Անտառուտ բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | | |
| | | Ե. Վարդանյան |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | | |
| | | Հ.Դավթյան |

Երևան, « 16 » «սեպտեմբերի» 2024թ.